
**ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԾՈՒՐՉ**

Յ. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ռ. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հ. Գ. ՉԱՅԻՄՅԱՆ

Անժխտելի է զարգացած ապահովագրական համակարգի դերը ժամանակակից շուկայական տնտեսությունում: ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման վերջին տարիների միտումները հիմք են տալիս փաստելու, որ ոլորտն այսօր գտնվում է կայացման փուլում: Երկրում ֆինանսական միջնորդության՝ առանց այն էլ ցածր մակարդակի պայմաններում խիստ փոքր է ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվների տեսակարար կշիռը ֆինանսական համակարգի գումարային ակտիվներում: 2007 թ. վերջի դրությամբ այս ցուցանիշը կազմել է 0.9%, ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.4 տոկոսային կետով¹: 2006-2007 թթ. տվյալներով, «ապահովագրավճարներ/ՀՆԱ» ցուցանիշով Հայաստանը մոտ երկու անգամ զիջում է անմիջական հարևաններ Վրաստանին և Ադրբեյջանին, միջինը մոտ տասն անգամ՝ Էստոնիային, Ռուսաստանին և Ուկրաինային (2007 թվականին այս ցուցանիշը Հայաստանում կազմել է ընդամենը 0.15%՝ նախորդ տարվա 0.22%-ի փոխարեն)²: Խիստ փոքր է նաև բնակչության մեկ շնչի հաշվով ապահովագրավճարների ծավալը. 2007 թվականին այն կազմել է 1537 դրամ³, այն դեպքում, երբ այս ցուցանիշի միջին մակարդակը Եվրոպայում կազմել է շուրջ 2.5 հազ. ԱՄՆ դոլար⁴: Նման վիճակը, ի տարբերություն նշված երկրների, հիմնականում պայմանավորված է ՀՀ-ում պարտադիր ապահովագրության տեսակների բացակայությամբ:

Տնտեսական գործունեության ցանկացած այլ ձևի նման ապահովագրական գործունեությունը ևս ենթակա է զորքալ գործընթացների ազդեցությանը: Միջազգային շուկաների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին տեղի են ունեցել ու շարունակում են տեղի ունենալ կառուցվածքային հիմնարար փոփոխություններ ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային մասշտաբով: Աճող մրցակցությունը ստիպում է ապահովագրողներին ավելի ու ավելի մեծ ռիսկեր ստանձնել՝ սպառողների համար ավելի գրավիչ ծառայություններով ու գնային առաջարկներով հանդես գալու համար: Միաժամանակ, ապահովագրական շուկաներն իրենց վրա

¹ Տե՛ս «Insurance Sector Development Trends in Armenia. Financial Sector Deepening Project», March 2008, www.fsdp.am:

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս Central Bank of Armenia, “Financial Stability Report – 2007”, էջ 44:

⁴ Տե՛ս Հ. Սարգսյան, Ապահովագրության զարգացման դինամիկան և նախադրյալները Հայաստանում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտաժողովի նյութեր, Եր., 2007, էջ 135:

կրում են ֆինանսական հատվածի մյուս շուկաներում տեղի ունեցող գործընթացների, ինչպես նաև տնտեսության իրական հատվածի զարգացումների ազդեցությունը: Արդյունքում շեշտակի աճել են շուկայական վարքի խնդրահարույց դրսևորումները, ֆինանսական լուրջ դժվարություններն ու ապահովագրողների սնանկացումները: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի կործանարար ազդեցությունից զերծ չմնացին նաև միջազգային ապահովագրական հսկաները, այդ թվում՝ ամերիկյան AIG-ն և այլ ընկերություններ:

Հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում համանման շուկայական իրողությունների ունեցած կարևոր դերով, տնտեսական համակարգերում ապահովագրության կարևոր նշանակությամբ ու ապահովագրական գործի մի շարք առանձնահատկություններով է պայմանավորված **ապահովագրության պեղական կարգավորման անհրաժեշտությունը**:

Տնտեսության, մասնավորապես ապահովագրական գործունեության պետական կարգավորման կարևորությունն առավել ընդգծվում է շուկայական տնտեսակարգին նոր անցում կատարած երկրների պարագայում, ինչպիսին Հայաստանն է: Աշխարհի տարբեր երկրների զարգացման փորձը ցույց է տալիս, որ սոցիալ-տնտեսական համակարգի վերափոխումները հիմնականում իրականացվում են պետության գործուն մասնակցությամբ: Այդ առումով խիստ կարևոր է շուկայական ինքնակարգավորման սկզբունքների և պետության կարգավորիչ լծակների արդյունավետ համատեղումը՝ հաշվի առնելով տվյալ երկրի զարգացման օրինաչափությունները:

Ապահովագրության կարգավորման⁵ (ընդհանրապես տնտեսության կարգավորման) անհրաժեշտության և հիմնավորվածության վերաբերյալ գիտական գրականության մեջ բերվում են մի շարք փաստարկներ: Ավանդական և առավել տարածված մոտեցումը՝ հանրային շահի տեսությունը, կարգավորման անհրաժեշտությունը հիմնավորում է ազատ շուկայական տնտեսական համակարգում առկա շուկայի ձախողումների հնարավորությամբ⁶, որոնք նվազեցնում են շուկայի արդյունավետությունը և, որպես հետևանք, համընդհանուր հասարակական բարեկեցությունը: Շուկայի ձախողումները, ըստ այս տեսության, կապված են առաջին հերթին տեղեկատվական ասիմետրիայի, շուկայական տեղեկատվության գնի, այսպես կոչված «պրինցիպալ-ագենտ» խնդրի՝ ապահովագրողների և ապահովադիրների շահերի հնարավոր բախման, բարոյական վտանգների և մի շարք այլ հիմնախնդիրների հետ: Շուկայի ձախողումների տարատեսակ դրսևորումների և դրանց հնարավոր հետևանքների ամփոփ պատկերը ներկայացված է գծապատկեր 1-ում:

Որպես մասնագիտացված ձեռնարկատիրական գործունեություն՝ ապահովագրական գործունեությանը հատուկ է շուկայում որոշակի տեղեկատվական ասիմետրիա առաջացնելու հատկությունը: Ընդ որում, տեղեկատվական ասիմետրիայի խնդրի հետ բախվում են ինչպես ապահովագրողները, այնպես էլ ապահովադիրները: Ապահովադիրը՝ որպես սպառող,


⁵ Այստեղ և այսուհետ «կարգավորում» ասելով հեղինակները նկատի ունեն *պետական* կարգավորումը՝ ի հակադրումն շուկայի *ինքնակարգավորման*:

⁶ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, **A. Kahn**, *The Economics of Regulation: Principles and Institutions*. MIT Press, Cambridge, MA, USA, 1988:

ոչ միշտ է տիրապետում շուկայական ողջ տեղեկատվությանը, որն անհրաժեշտ է ռացիոնալ որոշում կայացնելու համար: Շուկայի սուբյեկտների կողմից հրապարակվող տեղեկատվությունը ոչ միշտ է ճշգրիտ և ամբողջական, հատկապես եթե չի գործում վերահսկող մարմնի արդյունավետ հարկադրանքը: Ավելին, հաճախ սպառողի գիտելիքներն ու փորձը բավարար չեն մասնագիտական տեղեկատվությունն ըստ էության ընկալելու և դրա հիման վրա համապատասխան որոշումներ կայացնելու համար: Նույնիսկ այն դեպքում, երբ սպառողն ի վիճակի է այս կամ այն չափով մասնագիտական դատողություններ անելու, անհրաժեշտ տեղեկատվությունը կարող է նրան հասանելի չլինել (ապահովագրական ընկերության ներքին առևտրային տեղեկությունները) կամ հասանելի լինել չարդարացված ծախսերի գնով:

Գծապատկեր 1

Շուկայի ձախողումները և դրանց հետևանքները



Տեղեկատվական ասիմետրիայի և շուկայական տեղեկատվության բարձր գնի այս խնդիրներն առավել սուր են դրսևորվում նոր ձևավորվող, խորության ու արդյունավետության բավարար մակարդակի դեռևս չհասած շուկաներում, ինչպիսին հայաստանյան ապահովագրական շուկան է: Այդ իսկ պատճառով, ելնելով սպառողների, այսինքն՝ լայն հանրության շահերի պաշտպանության իր մանդատից, պետությունը պետք է կարգավորիչ միջամտություն ունենա տեղեկատվական ասիմետրիայի հետևանքները մեղմելու խնդրում:

Հանրային շահի տեսությունը լրացվում է տնտեսական շահերի տեսությամբ, ըստ որի՝ կարգավորման ռեժիմի մասին որոշումները, մասնավորա-

պես ապահովագրության պետական կարգավորման սկզբունքներն ընդունվում են՝ ելնելով ոչ թե արդյունավետության և արդարության չափանիշներից, այլ գործող իշխանությունների քաղաքական վարկանիշն ու հեղինակությունը բարձրացնելու շահադրոյմից⁷: Խնդիրը դիտարկելով գաղափարախոսական մոտիվացիաների տեսանկյունից՝ Կ. Մեյերի տեսությունն⁸ ամբողջացնում է հասարակության տարբեր խմբերի շահերի՝ տնտեսական քաղաքականության ընտրության վրա ազդեցության պատկերը: Ըստ Մեյերի՝ կարգավորման գործընթացների նախագծման ընթացքում որոշիչ են ոչ միայն կարգավորող մարմնի, այլև քաղաքական վերնախավի, սպառողների խմբերի ու բուն ապահովագրողների շահերը: Ըստ այդմ, որոշում կայացնող իշխանությունները կարող են առաջնահերթությունը տալ այս կամ այն շահագրգիռ հանրության շահերին՝ չկարևորելով մյուսներին:

Ամեն դեպքում ակնհայտ է, որ ապահովագրական գործունեության արդյունավետ պետական կարգավորումը ոչ այլ ինչ է, քան տարբեր նպատակների «փոխգիջումային» հաշվեկշռում՝ ուղղված համընդհանուր հասարակական բարեկեցության մաքսիմալացմանը: Կարգավորման նպատակների ողջ գունապնակի, ինչպես նաև շահագրգիռ հասարակական-քաղաքական ուժերի առանձնահատուկ շահերի գիտակցումն ու դրանց արդյունավետ համադրումն է, որ պետք է ապահովի տնտեսական քաղաքականության արդյունավետ, օպտիմալ լուծումներ:

Ապահովագրական գործունեության կարգավորման հիմնական սկզբունքները: Ռազմավարական չափորոշիչների մակարդակում տնտեսության պետական կարգավորման ինստիտուցիոնալ կառուցակարգերն ու քաղաքականությունը պետք է հիմնվեն մեկնարկային որոշակի սկզբունքների համակարգի վրա, որն արտացոլում է կարգավորման հիմնանպատակներն ու ապահովում լայն հանրության համար դրա օգտակարությունը: Նման սկզբունքները կարող են արդյունավետ ուղենիշ հանդիսանալ տնտեսական քաղաքականություն մշակողների համար՝ ապահովագրության կարգավորման ոլորտում պետական քաղաքականությունը հաջողությամբ ծառայեցնելու շուկայի արդյունավետության խթանման, արդարության ու սպառողների պաշտպանության նպատակներին:

Ապահովագրական գործունեության պետական կարգավորման քաղաքականության ու ինստիտուցիոնալ կառուցվածքների կարևորությունը շեշտադրված է նաև Ապահովագրողների վերահսկողների միջազգային ասոցիացիայի (International Association of Insurance Supervisors, IAIS) կողմից մշակված «Ապահովագրության հիմնական սկզբունքներ և մեթոդաբանություն» փաստաթղթում⁹, որը սահմանում է ապահովագրական կարգավորման ու վերահսկողության արդյունավետ համակարգերի հիմնական սկզբունքները և առաջարկում դրանց գնահատման չափորոշիչներ: «Սկզբունքները»

⁷ Տե՛ս **R. Klein**, Insurance regulation in transition. The Journal of Risk and Insurance, September 1995, vol. 62, no. 3 (pp. 363-404), p. 366:

⁸ Տե՛ս **K. Meier**, The Political Economy of Regulation: The Case of Insurance. New York, USA, 1988:

⁹ Տե՛ս «International Association of Insurance Supervisors». «Insurance Core Principles and Methodology». Approved in Singapore, on 3 October 2003:

նախատեսված են մեթոդական ուղեցույց ծառայելու տարբեր երկրներում ապահովագրության ոլորտի կարգավորման ինստիտուցիոնալ-քաղաքական համակարգի կազմակերպման համար:

Այս փաստաթղթում նշվում է, որ ապահովագրական ինդուստրիան, ինչպես նաև ֆինանսական համակարգի այլ ոլորտները, փոփոխությունների են ենթարկվում սոցիալական ու տնտեսական գործոնների լայն շրջանակի ազդեցության ներքո: Մասնավորապես, ապահովագրական և դրա հետ փոխկապակցված գործառնությունները առավել աճող ծավալներով հատում են ազգային տնտեսության և ոլորտային սահմանները: Տեխնոլոգիական առաջընթացը խթանում է ինովացիաները: Ապահովագրական վերահսկողական համակարգը և պրակտիկան պետք է շարունակաբար նորացվեն և հարմարեցվեն այդ զարգացումներին: Դեռ ավելին, ապահովագրական և ֆինանսական այլ ոլորտների վերահսկողներն ու կարգավորողները պետք է գիտակցեն և նպատակաուղղվեն ֆինանսական ու համակարգային կայունության հետ կապված խնդիրներին, որոնք առաջ են եկել ապահովագրական հատվածից:

Փաստաթղթում շարադրված սկզբունքները հստակորեն ամրագրում են ապահովագրական կարգավորման ու վերահսկողության արդյունավետ գործառնման հետևյալ պայմանների առկայությունը.

- ♦ զարգացած ֆինանսական շուկաներ և արդյունավետ ենթակառուցվածքներ,
- ♦ կարգավորման ամբողջական ինստիտուցիոնալ-քաղաքական կառույցներ և օրենսդրություն,
- ♦ անկախ, թափանցիկ, համակարգի մասնակիցների շրջանում բավարար հեղինակություն վայելող, համապատասխան նյութատեխնիկական ու մարդկային ռեսուրսներով համարված կարգավորող մարմին,
- ♦ հրապարակային նպատակների ու խնդիրների հստակ սահմանված համակարգ:

Ժամանակակից շուկայական տնտեսության գաղափարախոսության շրջանակներում կարգավորման վարչական լծակների չարաշահումն անընդունելի է, և ցանկացած պետական միջամտություն պետք է կրի գերազանցապես անուղղակի, բուն շուկայական փոխազդեցություններով միջնորդավորված բնույթ: Ակնհայտ է, որ զարգացած շուկաների ու շուկայական ենթակառուցվածքների բացակայության պայմաններում տնտեսավարող սուբյեկտներին «վերևից» պարտադրվող կարգավորիչ մեխանիզմները չեն կարող առավելագույնս արդյունավետ լինել: Ավելին, մեր կարծիքով, նույնիսկ օրենսդրությամբ նախատեսված վարչարարական պարտադրանքի ձևաչափով հասարակությանը մատուցվող քաղաքական որոշումները պետք է հիմնված լինեն դրանց ազդեցությունը կրող սուբյեկտների շրջանում տնտեսական շահագրգռվածություն ստեղծող հզոր ազդակների վրա: Խոսքը, մասնավորաբար, վերաբերում է պարտադիր ապահովագրության այս կամ այն տեսակի ներդրմանը. վերջինս ապահովագրական շուկայի սուբյեկտներին և լայն հանրությանը, որպես կանոն, պարտադրվում է օրենքի ուժով: Դրա հանրային օգուտների չգիտակցման պարագայում այն հաճախ ընկալվում է որպես պետության կողմից սահմանվող լրացուցիչ հարկ: Կարգավորիչ մարմնի խնդիրն է պարտադիր ապահովագրության

ներդրման և իրականացման գործընթացը կազմակերպել այնպես, որ բոլոր ներգրավված սուբյեկտներն ընկալեն ու յուրացնեն դրա տնտեսական օգուտները. սպառողները՝ լրացուցիչ կայունության ու անվտանգության երաշխիքները, ապահովագրողները՝ գործունեության ընդլայնման, նոր հաճախորդների ներգրավման ու ընդհանուր շահութաբերության բարձրացման հեռանկարները, և այլն:

Ապահովագրական կարգավորման իրավական-ինստիտուցիոնալ դաշտի որպես առավել կարևոր բաղադրատարրերից կարելի է առանձնացնել ոլորտը կարգավորող հստակ, ամբողջական և հնարավորինս տարամեկնաբանությունների տեղիք չտվող օրենսդրությունը, ինչպես նաև շուկայի սուբյեկտների շահերը պաշտպանող գործուն և վստահելի դատական համակարգը: Նման անհրաժեշտ պայմանների բացակայությունը կարող է բերել ապահովագրական համակարգում հայեցողական, անարդյունավետ, հաճախ գերձախսատար կարգավորիչ միջամտությունների, ինչն իր հերթին կպակասեցնի շուկայի նկատմամբ վստահությունը թե՛ սպառողների, թե՛ ներդրողների կողմից: Մինչդեռ նման վստահությունը, կարելի է ասել, կենսական անհրաժեշտություն է հայաստանյան ապահովագրական շուկայի համար՝ զարգացման հետագա ներուժն ապահովելու տեսանկյունից:

ՀՀ-ում ապահովագրական օրենսդրությունը ոլորտի կարգավորման և քաղաքացիական իրավական հարաբերությունների առումով ներկայումս ունի գրեթե ամբողջական տեսք: Ապահովագրական գործունեության մասին» հիմնական օրենքով, մի շարք այլ օրենքներով, մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքով («Ապահովագրություն»՝ 54-րդ գլուխ), ինչպես նաև «ՀՀ կենտրոնական բանկի մասին», «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին», «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքներով: Ապահովագրության ոլորտը, բացի նշված օրենքներից, կանոնակարգվում է նաև կարգավորող մարմնի շուրջ 20 նորմատիվ իրավական ակտերով:

2007 թ. ընդունված «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքը նախորդ մայր օրենքների նկատմամբ առաջադեմ է. դրանում տեղ են գտել մի շարք էական նոր մոտեցումներ և դրույթներ, որոնք նախկինում, ըստ էության, բացակայում էին: Դրանք են՝ ապահովագրության տեսակների և ձևերի դասակարգումը, որը հիմնված է Եվրամիության երկրների դասակարգման վրա, ապահովագրական ընկերությունների միավորման, լուծարման, սնանկացման, կորպորատիվ կառավարման, ներքին աուդիտի, պատասխանատու ակտուարի, ապահովագրական գաղտնիքի, ապահովագրական պորտֆելի փոխանցման և առանձին գործառնությունների փոխանցման մասին դրույթները:

Համաձայն Ապահովագրողների վերահսկողների միջազգային ասոցիացիայի վերը նշված փաստաթղթի 2-րդ չափորոշիչի՝ ապահովագրա-

կան գործունեության կարգավորման և վերահսկողության հիմնական նպատակները պետք է հստակ սահմանված լինեն: Այս առումով պետք է փաստել, որ ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակներն ու լիազորությունների շրջանակը ներկայացված են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում (հոդվածներ 20-րդ, 36-րդ, 39-րդ): «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքը սահմանում է ապահովագրության ոլորտի կարգավորման և վերահսկողության նպատակները: Օրենքը ապահովադիրների պաշտպանության նպատակով Կենտրոնական բանկին օժտում է համարժեք իրավունքներով ու պարտավորություններով՝ ինչպես ապահովագրողների ֆինանսական կայունության ապահովման, այնպես էլ շուկայական վարքագծի և հավասար տնտեսական մրցակցության ապահովման առումով: Համաձայն օրենքի նախաբանի՝ դրա «հիմնական նպատակներն են ապահովադիրների, ապահովագրված անձանց և շահառուների իրավունքների պաշտպանությունը, ապահովագրական համակարգի կայուն զարգացման, հուսալիության և բնականոն գործունեության ապահովումն ու ապահովագրական գործունեություն իրականացնողների միջև ազատ տնտեսական մրցակցության համար հավասար պայմանների ստեղծումը»:

Ընդհանուր առմամբ, ապահովագրական գործունեության պետական կարգավորումը հետապնդում է մի շարք նպատակներ, որոնցից առավել հիմնականները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- ♦ ապահովագրողների ֆինանսական կայունության և ապահովագրական համակարգի հուսալիության վերահսկում,
- ♦ սպառողների (ապահովադիրների, ապահովագրված անձանց, շահառուների) շահերի պաշտպանության ապահովում,
- ♦ ապահովագրողների և շուկայի մյուս մասնագիտացած սուբյեկտների համար գործունեության իրավական-կազմակերպական անհրաժեշտ պայմանների ստեղծում և պահպանում, այդ թվում՝ մրցակցային հավասար միջավայրի ձևավորում և մենաշնորհային գործունեության ու շուկայի չարաշահումների կանխում,
- ♦ ապահովագրական ծառայությունների շուկայի զարգացման արդյունավետ կազմակերպում և դրան ուղղված գործընթացների համակարգում,
- ♦ շուկայում առկա տեղեկատվական անհամաչափության (ասիմետրիայի) մեղմում և դրա բացասական հետևանքների նվազեցում,
- ♦ շուկայական ողջամիտ հավասարակշռության ապահովում՝ առանձնակի նշանակության ծառայությունների գծով գնային վերահսկողության գործիքների ու կարգավորման այլ հարակից մեխանիզմների կիրառման միջոցով և այլն:

Ապահովագրական գործունեության կարգավորման հիմնական ուղղություններ:

Ապահովագրական գործունեության պետական կարգավորման, ինչպես և ֆինանսական ոլորտի այլ ինստիտուտների կարգավորման մեխանիզմները, ըստ էության, դասակարգվում են երեք խմբի.

- ♦ պրոդենցիալ կամ կանխարգելիչ կարգավորման նորմեր՝ նպատակաուղղված ապահովագրողների ֆինանսական կայունության և վճարունակության պահպանմանը,

♦ ապահովագրական գործունեություն իրականացնող ինստիտուցիոնալ սուբյեկտների, ներառյալ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնողների շուկայական վարքագծի կանոնների կարգավորում ու վերահսկողություն,

♦ սպառողների շահերի պաշտպանության կարգավորում և վերահսկողություն:

Ինչպես և ամբողջ աշխարհում, ապահովագրության կարգավորման և վերահսկողության զարգացումները Հայաստանի Հանրապետությունում պետք է ընթանան զուգահեռ, հաշվի առնեն հետևյալ խնդիրները: Առաջինը՝ օրենսդրության կատարելագործումը, որը պետք է ուղղված լինի ապահովագրության վերահսկող մարմնին օրենսդրորեն ավելի լայն լիազորություններ տրամադրելուն, նպատակաուղղված նոր մարտահրավերներով ի հայտ եկած ռիսկերի արդյունավետ չեզոքացմանը: Երկրորդ ուղղությունը բուն վերահսկողական գործընթացի կառուցակարգերի (կամ մեխանիզմների) և գործելակարգերի կատարելագործումն է:

ՀՀ-ում ֆինանսապես կայուն և հուսալի զարգացող ապահովագրական ինդուստրիայի համար ապահովագրողների կանոնակարգման և վերահսկողության քաղաքականության, այդ թվում՝ օրենսդրության և վերահսկողական գործելակարգերի կատարելագործման առանցքում պետք է դրվեն հետևյալ խնդիրները:

♦ Ընկերությունների գործունեության թափանցիկության բարձրացման, կորպորատիվ կառավարման չափորոշիչներով առաջնորդվելու կարողության նպատակով՝ կարգավորիչ և վերահսկողական մեխանիզմների ներդրումը: Դա ենթադրում է տնօրենների խորհրդի և բարձրագույն ղեկավարության պատասխանատվության բարձրացում, առողջ և խելամիտ կառավարման նորմերի պահպանում: Դրա նպատակն է ուժեղացնել ընկերության խորհրդի ներկայիս թույլ անկախությունը բաժնետերերից և ղեկավար անձնակազմից, որի հետևանքով խորհուրդը չի կարողանում իրականացնել գործունեության կառավարումը և ապահովել զարգացման ուղղությունները:

♦ Ապահովագրողների վճարունակության, կապիտալի համարժեքության և տեխնիկական պահուստները գնահատելու և համարժեքությունը ապահովելու համար օրենսդրությամբ անհրաժեշտ է իրականացնել սցենարային տարբեր իրավիճակների սթրես-թեստավորման պահանջի ներդրումը: Վճարունակության անբարենպաստ սցենարների սթրես-թեստավորման կամ սցենարային կանխատեսումների կիրառումը նպատակահարմար է սկզբում ներդնել ոչ կյանքի ապահովագրություն և վերաապահովագրություն իրականացնող ապահովագրողների համար: Առաջարկվում էր՝ սցենարային կանխատեսման գործելակարգը ներդնելու պահից հաշված 2 տարի լինի պայմանական: Այդ ընթացքում Կենտրոնական բանկի կողմից պետք է կիրառվեն բացառապես խորհրդատվական կամ նախազգուշական միջոցառումներ՝ բացառելով պատասխանատվության տուգանային միջոցների կիրառումը: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ դրա ներդրումը պահանջում է որոշակի փորձի հիման վրա կառուցակարգերի հստակեցում: Այն պետք է ի սկզբանե խթանի և ոչ թե

զայի ապահովագրողների կողմից ռիսկերի կառավարման ներքին մոդելի ձևավորումը:

- ♦ Օրենսդրական համարժեք կանոնների սահմանում ապահովագրողների միջխմբային կապերից առաջացող ռիսկերի վերահսկողության համար, որոնք հնարավորություն կտան ժամանակին ի հայտ բերել և կանխել դրանց հետևանքները: Նպատակահարմար է օրենքով սահմանել ֆինանսական խմբի կամ կոնգլոմերատի վերահսկողության խնդիրները, մասնավորապես՝ դրանց ծավալները, ռիսկերը, հիմնական սահմանափակող ցուցիչները:

- ♦ Օրենսդրությամբ և հատկապես դրա կիրարկմամբ անհրաժեշտ է խախտում թույլ տված սուբյեկտների նկատմամբ սահմանել և ապահովել ներգործության արագ և համոզիչ միջոցների կիրարկում՝ ներգործության առանցքը կառուցելով կանխարգելիչ և վերականգնողական միջոցառումների վրա:

- ♦ Վերահսկողության կառուցակարգի փոխադրումը ռիսկերի կառավարելիության կարողությունների վերահսկողության վրա, որը թույլ է տալիս բացահայտել և ուժեղը կենտրոնացնել վերահսկվողի բարձր ռիսկային ոլորտների վրա, և հնարավորություն է ստեղծվում խնայել զգալի միջոցներ ու միաժամանակ էապես բարձրացնել վերահսկողության գործընթացի արդյունավետությունը:

- ♦ Ապահովագրողների ֆինանսական բարդությունների բացահայտման մեխանիզմի կառուցումը ռիսկայնության գնահատման աստիճանների վաղ ահազանգող թեստավորման համակարգի հիմքով: Այն հնարավորություն կտա արդյունավետ ձևով գնահատել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքով պահանջվող ապահովադիրների, ապահովագրված անձանց (կամ շահառուների) շահերի վտանգման աստիճանը, ինչպես նաև սահմանել ընկերության գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականը:

Ինչպես վկայում է համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, կարգավորման առումով չափազանց կարևոր է, որ անհրաժեշտության դեպքում ապահովագրության վերահսկող մարմինն իր նպատակներին հասնելու համար ունենա անհապաղ միջոցառումներ ընդունելու իրավասություններ հատկապես ապահովադիրների շահերի պաշտպանության նպատակով: Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի բաժին 9-ի գլուխ 25-ի՝ ՀՀ կենտրոնական բանկն ունի լիազորություններ կանխարգելիչ և ճշգրտող միջոցառումներ իրականացնելու համար: Երբ ապահովագրողը ֆինանսական բարդություններ ունի, ՀՀ կենտրոնական բանկը կարող է արագ գործել՝ կիրառելով նախազուշացման և հանձնարարականների ինստիտուտը (146 հոդված): Այն կիրառելու համար հիմք կարող է հանդիսանալ այն, որ ըստ Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքի՝ ընկերությունն իրականացրել է այնպիսի գործունեություն, որը վտանգել է կամ կարող էր վտանգել ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ շահառուների շահերը (143 հոդված, կետ 3): Համաձայն օրենքի 153-րդ հոդվածի («Ապահովագրական, վերաապահովագրական և ապահովագրական միջնորդային գործունեության սահմանափակումները»)՝ ապահովագրական, վերաապահովագրական, ապա-

հովազրական միջնորդային գործունեության ռիսկայնությունը զսպելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է սահմանափակումներ կամ իրականացման հատուկ կարգ նախատեսել վերահսկվողի ապահովագրական կամ այլ գործառնությունների կամ դրանց մի մասի, ներդրումների առանձին տեսակների համար: Բավարար լիազորությունների առումով օրենսդրությունը մտահոգություններ չի առաջացնում. ամբողջ խնդիրը հանգում է վերահսկվող սուբյեկտների մոտ ֆինանսական բարդությունների վաղ ահազանգմանը: Դրան է նպատակաուղղված ապահովագրողների ռիսկայնության գնահատման աստիճանների ներդրումը: Դրա սահմանման հիմնական առավելություններն են.

1. Առաջնահերթ բարդություն առաջացնող ռիսկերի բացահայտման ձևաչափը համակցվում է դրանց վաղ ահազանգման համակարգի հետ:

2. Ապահովվում է վերահսկվող ընկերության գնահատման և վերահսկող մարմնի պատասխանատվության տրամաբանական հետևողականությունը:

3. Վերահսկողական աշխատանքները կարող են զուգակցվել արտաքին աուդիտորների հետ անհրաժեշտ համագործակցությամբ:

4. Ձևայնացված կառուցակարգերի համաձայն՝ բոլոր վերահսկվողները տեղեկացված են, թե որ գործունեությունն ու պայմաններն են դիտարկվում բարձր կամ ցածր ռիսկային, և ինչպիսի ներգործության միջոցներ կարող է իրականացնել վերահսկող մարմինը, եթե ռիսկերի աստիճանը մեծանա:

5. Վերահսկող մարմինը նախապես նախանշում և ապահովում է վերահսկողության ընդհանուր քաղաքականությունը վերահսկվող ընկերությունների շրջանում բարդությունների ի հայտ գալու և զարգանալու դեպքում:

Ապահովագրության կարգավորման և վերահսկողության առանձնակի խնդիրներից է ապահովագրական ծառայությունների և դրանց սակագների վերահսկումը, որն ունի երկակի նշանակություն՝ ապահովագրողների ֆինանսական կայունության պահպանում և սպառողների շահերի պաշտպանություն: Հաճախ կարգավորող մարմինը պահանջում է հաստատման ներկայացնել ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող պոլիսները և դրանց սակագների հիմնավորումները: Կիրառվում են նաև ապահովագրական ծածկույթի պայմանների «օրինակելի» ձևեր և սակագների թույլատրելի միջակայքեր: Համեմատաբար խիստ կարգավորման այս մոտեցումները կիրառելի են գերազանցապես զարգացման սկզբնական փուլերում գտնվող շուկաների համար՝ հիմնականում զարգացող և անցումային տնտեսություններում, մինչդեռ առավել զարգացած շուկաներում կարգավորող մարմիններն ավելի մեծ տեղ են տալիս առաջարկի ձևավորման ու գնորդման մրցակցային կառուցակարգերին:

Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում նպատակահարմար է ապահովագրական ծառայությունների ու սակագների՝ վերահսկողի կողմից նախնական հաստատման մեխանիզմը մշտապես կիրառել պարտադիր ապահովագրության ոլորտում՝ անկախ կամավոր ապահովագրության շուկայում կարգավորման ռեժիմի ազատականացման աստիճանից:

Գույքի և պատասխանատվության ոլորտում շուկայական կարգավոր-

ման տարբեր ռեժիմների համեմատական վերլուծությունը, սակայն, ցույց է տվել, որ ծառայությունների ու սակագների նախնական հաստատման գործընթացները շուկայական հավասարակշռության ու ապահովագրողների ընդհանուր շահութաբերության մակարդակների վրա էապես չեն ազդում, ասել է թե՛ կարգավորվող շուկաները «միջին հաշվով» գործում են նույն կերպ, ինչ չկարգավորվողները¹⁰: Այս պնդումը կարելի է տրամաբանական համարել, եթե հաշվի առնենք, որ շուկայի մրցակցային ուժերը ընդունակ են չեզոքացնելու պետական կարգավորման առաջացրած «շուկայի խեղաթյուրումները» (բացառություն կարող են կազմել, թերևս, պետության կողմից սահմանվող «գնային առաստաղները»)՝ ինքնաձախաձածակման կետից ցածր մակարդակում, ինչը երբեմն արվում է սպառողների շահերից ելնելով): Ուստի կարելի է պնդել, որ շուկայական վերահսկողության նման մեխանիզմների կիրառությունն արդարացված է մրցակցային շուկաներում՝ որպես սպառողների շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք և շուկայի նկատմամբ վստահություն ստեղծող գործոն: Ավելորդ չէ նշել, որ ոչ մրցակցային, թույլ զարգացած շուկաներում պետության նման միջամտությունն էլ ավելի հիմնավորված պետք է համարել. այն ոչ թե չի սահմանափակի շուկայի արդյունավետությունն ու շահութաբերությունը, այլ սկզբնական շրջանում նույնիսկ դրական ազդեցություն կունենա շուկայի այդ և այլ ցուցանիշների վրա:

Ապահովագրության շուկայական կարգավորման մեկ այլ կարևոր ուղղություն է մասնագիտացած սուբյեկտների շուկայական վարքագծի վերահսկողությունը: Շուկայի զարգացման սկզբնական փուլում պետությունը պետք է նշանակալի մասնակցություն ունենա սպառողների շահերի պաշտպանության, սպառողների բողոքների, շուկայի սուբյեկտների կողմից դրսևորվող հակաշուկայական վարքի նկատմամբ հսկողություն իրականացնող ինստիտուտների ձևավորմանն ու զարգացմանը: Վերջիններս ներառում են ինչպես հատուկ ասոցիացիաներ ու հասարակական նախաձեռնություններ, այնպես էլ կարգավորիչ-վերահսկողական լիազորություններով օժտված մարմիններ՝ ֆինանսական հաշտարարը, ապահովագրողների բյուրոները, վերահսկող մարմնի հատուկ ստորաբաժանումները և այլն: Սպառողների շահերի պաշտպանության առավել արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է ունենալ շուկայական տեղեկատվության հրապարակման և մատչելի ձևով «շարքային սպառողին» մատուցման գործուն ընթացակարգեր ու խողովակներ՝ ինտերնետային էջեր, պարբերականներ, հեռուստառադիոհաղորդումներ և այլն: Ընդ որում, եթե շուկայի զարգացման սկզբնական փուլում այս բոլոր գործընթացների հիմնական ծանրությունն ընկնում է վերահսկող մարմնի վրա, ապա համակարգի կայացմանը զուգընթաց պետք է ձևավորվեն ինքնակառավարման ինստիտուցիոնալ կարողություններ, որոնք էլ կստանձնեն այս գործառույթները:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ ապահովագրական համակարգում արդյունավետ իրականացվող շուկայական կարգավորումը երկարաժամկետ հատվածում նաև խթանում է շուկայի ինքնակարգավորման

¹⁰ Տե՛ս **R. Klein**, Insurance regulation in transition. The Journal of Risk and Insurance, September 1995, vol. 62, no. 3 (pp. 363-404):

ներուժի զարգացումը՝ նպաստելով շուկայի սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և ավելի տեղեկացված ու կրթված սպառող հասարակության ձևավորմանը: Շուկայական ինքնակարգավորման հասուն և գործունակ մեխանիզմներն իրենց հերթին հետագայում կարող են մասնակիորեն հաջողությամբ փոխարինել պետական կարգավորման որոշ գործառնությունների և արդյունավետորեն լրացնել մյուսները:

Г. Л. САРКИСЯН, Р. Х. АРУТЮНЯН, А. Г. ЗАИМЦЯН — *О теоретико-методологических вопросах государственного регулирования страховой деятельности.*— В статье рассматриваются вопросы необходимости государственного регулирования страховой деятельности, а также содержание основополагающих принципов государственной политики в этой области. Выявляются ключевые направления страхового регулирования с точки зрения улучшения общественного благосостояния как основной цели экономической политики государства. В Армении, особенно в условиях незавершенных процессов системной трансформации экономики, субъекты рынка ожидают от государства не столько надзорных, сколько развивающих страховую систему действий, а точнее — их эффективное, экономически обоснованное сочетание.